




ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՆՈՒՄ



Գյուղատնտեսությունը կարևորագույն դեր ունի Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և պարենային անվտանգության ապահովման գործում: Երկրում անկախության հռչակումից հետո առաջինն սկսվեցին տնտեսական բարեփոխումներ, սեփականաշնորհվեցին հողային տարածքներ և արտադրության միջոցներ, ստեղծվեցին օրենսդրական հիմքեր սեփականության, գների ազատականացման, բանկային համակարգի սպասարկվող ենթակառուցվածքների զարգացման համար: Այս ամենը լուրջ հիմքեր ստեղծեց գյուղատնտեսության հետագա աճի և զարգացման համար:

Գյուղատնտեսությունը համարվում է երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: 1998-2002 թվականներին ՀՆԱ-ում ագրոարդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 35%, որից 23-26%-ը բաժին է ընկնում



գյուղատնտեսությանը: Հանրապետության ընդհանուր 2974.3 հազ. հա հողային տարածքներից միայն 69.8%-ը կարելի է օգտագործել գյուղատնտեսական նպատակներով, իսկ տարածքի մոտ 90%-ը գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 1000մ բարձրության վրա և ունի 6 և ավելի աստիճան թեքություն: ՀՀ գյուղատնտեսությունը ծավալվում է 14 հազ. կմ²-ից պակաս հողատարածությունների վրա, որից 520 հազ. հեկտարը (37.3%) վարելահողեր են, մոտ 40 հազ. հեկտարը (2.9%)՝ բազմամյա տնկարկներ, 143 հազ. հեկտարը (10.3%) կազմում են խոտհարքեր, իսկ 689 հազ. հեկտարը (49.5%)՝ արոտավայրեր:

Հայաստանն ունի եզակի ուղղաձիգ գոտիականություն, որը հատուկ է լեռնային երկրներին: Երկիրը հայտնի է հողատեսքերի բազմազանությամբ: Հատկապես վերջին 30-40 տարիների ընթացքում մեծ աշխատանք է կատարվել նախկինում չօգտագործվող հողերի մելիորացման և ոռոգման համակարգերի ընդլայնման գործում:



ՀՈՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ԶԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՁ. ՀԱ	ԿԱՌՈՆՑՎԱԾՔԸ %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	2077.0	100
Վարելահողեր	449.2	21.6
Բազմամյա տնկարկներ	33.0	1.6
Խոտհարքներ	128.3	6.2
Արոտներ	1067.2	51.4
Այլ հողատեսքեր	399.3	19.2

Գյուղատնտեսության արտադրողականությունը և ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդամթերքի գները և դրանով իսկ ազդում բնակչության կենսամակարդակի վրա: Համախառն գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը՝ շուրջ 97%, արտադրվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ մնացածը՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից:

Մշակաբույսերի ցանկն անցնում է 50-ից, իսկ բնության մեջ հանդիպողներինը՝ 6500-



ից: Դրանցից մոտ 300-ը ուտելի բույսեր և դեղաբույսեր են, որոնք հավաքվում են բնակչության կողմից և օգտագործվում՝ կազմելով սպառվող սննդի 10-15%: Հայաստանի և նրա գյուղատնտեսության համար ամենաբնորոշը ուղղահայաց գոտիականությունն է: Կլիմայական պայմանների փոփոխությունը տարբեր բարձրություններում մի շարք առավելություններ է ստեղծում, որոնցից ամենակարևորը դիվերսիֆիկացումն է՝ գյուղատնտեսության համար և կենսաբազմազանության պահպանման հնարավորությունը՝ բնապահպանության և էկոլոգիայի համար: Օրինակ՝ ծիրանը, որի բերքատվության տևողությունը մի վայրում 10-15 օր է, հանրապետության շուկաներում գոյություն ունի 100-105 օր: Դիվերսիֆիկացման մեկ այլ օրինակ է

գյուղատնտեսական տեխնիկայի, հատկապես կոմբայնների սակավության պայմաններում, միննույն մեքենայի բազմիցս օգտագործման հնարավորությունը. հացահատիկահավաք կոմբայնները հուլիսին նախալեռնային շրջաններից իջնում են հարթավայր, կատարում բերքահավաքը, իսկ օգոստոսին՝ բարձրանում նախալեռնային և լեռնային շրջաններ:



Նույն ուղղահայաց գոտիականությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում նաև մեղվաբուծության համար: Հիմնական նպաստավոր պայմաններ են տաք և երկարատև ամառը, ինչպես նաև ծաղկող պտղատու այգիների, ծաղկաշատ մարգագետինների և արոտավայրերի առկայությունը:

Գյուղմթերքի արտադրման համակարգի բարելավումը պահանջում է հուսալի գործող վերամշակում, վարկեր և ապահովագրություն, շուկաների նկատմամբ կողմնորոշում, ինչպես նաև տեխնիկական և խորհրդատվության օգնություն:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



Photo by Lilit Movsisyan

Զարգացած երկրներում ավտոմատացման, մեքենայացման և հետերքահավաքի տեխնոլոգիաների շնորհիվ գյուղատնտեսությունը զգալի առաջընթաց է ապրում: Օրինակ՝ անասնաբուժական տնտեսությունները հիմնականում կառավարվում են մեքենաներով, մասնավորապես ավտոմատացված են կերակրման, կրթի, փաթեթավորման, պիտակավորման և որակի վերահսկողության հետ կապված գործառնությունները: Իսկ թռչնաբուժարանները կիրառում են ստանդարտացված չափերի արտադրության, սպանդի, սառեցման և փաթեթավորման ավտոմատացված տեխնոլոգիաներ: Նախկինում մրգատու այգիները և ջերմոցային տնտեսությունները ձեռքով էին մշակվում, իսկ հիմա կիրառվում են հատուկ մեքենաներ պտուղ-բանջարեղենը տնկելու, ջրելու, պարարտացնելու, բերքահավաքի, ինչպես նաև տեսակավորման համար: Այս տեխնոլոգիաների շնորհիվ ոչ միայն կրճատվում է մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունը, այլ նաև գյուղատնտեսությունը դառնում է արդյունավետ և ռեսուրսախնդիր: Օրինակ՝ Իսրայելը, որը համարվում է անապատային երկիր, գյուղատնտեսության ոլորտում գիտական լուրջ քայլերի իրագործման շնորհիվ,

առանց ջրային ռեսուրսների կամ տարածքի ընդարձակման բարձր բերքատվություն է ապահովում:



Գլոբալ դինամիկան և կանխատեսումները փաստում են այն մասին, որ ապագայում մեծանալու է պահանջարկը ագրոպարենային ապրանքների նկատմամբ: Մաքքենզի ընկերության ուսումնասիրությունների համաձայն՝ սննդարդյունաբերությունը և ագրոֆիզնեսը կազմելու են 5 տրիլիոն, ընդ որում աճի ոլորտը շարունակական է լինելու, մոտավորապես 2050թ. կալորիական պահանջարկը կավելանա 70%-ով, իսկ մաշակաբույսերի պահանջարկը՝ 100%-ով:

Հաշվի առնելով ապագայում սպառնացող վտանգները՝ ՀՀ գյուղատնտեսությունը պետք է կենտրոնանա ներդրումային միջավայրի բարելավման և խթանման, ներդրումներին աջակցող ինստիտուտների ուժեղացման և քաղաքականության բարեփոխման վրա: Օտարերկրյա ներդրումները կարող են հանդիսանալ ոչ միայն կապիտալի ներգրավման առումով լավ միջոց, այլ նաև՝ գիտելիքի, փորձառության, տեխնոլոգիաների և նոր շուկաների:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

ՀՈՂ: Յուրաքանչյուր երկրում գոյություն ունի գյուղացիական տնտեսության օպտիմալ չափ և հողահանդակների օպտիմալ շահագործում: Հայաստանում գյուղացիական տնտեսության միջին չափը հավասար է 1.37 հա և տատանվում է 0.61 հա Արարատյան հարթավայրում և 3.0 հա նախալեռնային և լեռնային շրջանների համար: Միջին հաշվով 3 կտոր կազմող տնտեսության հողատարածքի 1 կտորը ոռոգելի է, 2-ը՝ ոչ: Տնտեսությունների 88%-ը ավելի փոքր է, քան 2 հեկտարը և զբաղեցնում է վարելահողերի շուրջ 23%-ը:



Հայաստանի մակերեսի մոտ կեսն առանց հողածածկի, լավային առաջացումներ են, իսկ մյուս կեսը՝ լեռնային մարգագետնային, շագանակագույն, անտառային դարչնագույն, կարբոնատային, կիսաանապատային և լեռնային սևահողեր: Ոչ ճիշտ ագրոտեխնիկայի կիրառման և հողապաշտպան միջոցառումների բացակայության պատճառով բոլոր հողերն այս կամ այն չափով վնասված են հումուսային շերտի աղքատացման, քամու և ոռոգման էրոզիայի, աղակալման հետևանքով: Հատկապես թեքությունների վրա գտնվող հողակտորներում անթույլատրելի է լանջին ուղղահայաց ակոսներով վար կատարելը, ինչը տարածված է գրեթե ամենուրեք, և դրա նախապայման է հանդիսանում հողերի սխալ հատկացումը:




Photo by Lilit Movsisyan

հարստացվել գոմաղբով կամ կոմպոստով:

Անտառածածկույթը Հայաստանում մոտ 15 տարի առաջ կազմում էր 11%, իսկ ներկայումս հանցավոր շահագործման հետևանքով այն կազմում է 6%: Էներգետիկ ճգնաժամի պատճառով վերջին 15 տարիների հողերը չնչին քանակությամբ են

Նախկինում Հայաստանում արտադրվում էր մեծ քանակությամբ ազոտական պարարտանյութ (ստացվում էր արդյունաբերական եղանակով), ինչպես նաև ներկրվում էր ազոտ, կալիում և ֆոսֆոր պարունակող պարարտանյութեր: Այժմ Հայաստանում կարգամիդ չի արտադրվում, փոխարենը Վրաստանից ներկրվում է ոչ բարձրորակ ազոտական սելիտրա: Եթե երկրի հողերը և ջուրը որոշ աշխարհագրական տարածքներում հարուստ են կալիումով, ապա ֆոսֆորական պարարտանյութերի վերջին տարիների բացակայությունը բերել է այնպիսի պակասի, որը վտանգ է հանդիսանում գյուղատնտեսական կենդանիների ոսկրակազմի նորմալ ձևավորմանը:

ՈՌՈԳՈՒՄ



Հայաստանում ոռոգելի է ավելի քան 200 հազ. հա տարածություն՝ հիմնականում ցածր արդյունավետությամբ: Վերջին 10-15 տարիների ընթացքում փոփոխվել են էներգիայի սակագները և փորձարկվել ոռոգման կառավարման տարբերակներ (օրինակ՝ ոռոգման համակարգի տարբեր հատվածների համար սուբյեկտների պատասխանատվության բաշխումը), համակարգը չի օպտիմալացվել, քանի որ փոփոխությունները հախուռն բնույթ են կրել և ոչ թե եղել վերլուծությունների, լայն քննարկումների արդյունք:

Photo by Lilit Movsisyan



Այս խնդիրներին ավելացել են նաև ոռոգման համակարգի տեխնիկական անմխիթար վիճակը և նոր տեխնոլոգիաների անտեսումը, որի պատճառով ջրի կեսից ավելին կորչում է մինչև դաշտ հասնելը, որտեղ էլ այն օգտագործվում է 50%-ից պակաս արդյունավետությամբ:

ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ: Հայկական վերամշակող ձեռնարկությունները տարիներ շարունակ ինչպես Հայաստանի, այնպես էլ արտաքին շուկաների համար արտադրել են բարձրորակ հյուրեր, ջեմեր և մուրաբաներ, տոմատի մածուկ, թթուներ և մարինադներ: Արտասահմանյան շուկաներում ճանաչում ունեն հայկական միրգն ու բանջարեղենը, ինչպես նաև նրանցից պատրաստված պահածոները: 10 տարի շարունակ նախկին շուկաների կորստի և ոչ ժամանակակից սարքավորումներով հագեցած լինելու պատճառով այդ բնագավառը անգործության էր մատնված: Միայն 1997թ-ից վերամշակող ձեռնարկություններն սկսեցին գործել՝ ընդլայնելով իրենց ծավալները: Նոր շուկաների որոնումներից, արտոնագրման համակարգի

անկատարությունից բացի կան նաև տեխնիկական խոչընդոտներ, որոնց պայմանների բարելավումից հետո պետք է բնագավառում փոփոխություններ սկսել:

Այլ խոչընդոտներ: Հանրապետությունում դաշտային գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը կազմում է ընդամենը 10%, իսկ տեխնիկայի



միջին արտադրությունը՝ 20-25 տարի: Ընդ որում, եթե հին տեխնիկան լավ խնամված է, ապա երկար է ծառայում, ինչը չի կարելի նշել կոմբայների մասին. պահեստամասերի բացակայության հետևանքով բերքի կորուստը կարող է հասնել մինչև 30%-ի: Ավելի վատ վիճակում է գտնվում

անասնապահական համալիրի հագեցվածությունը անասնապահական տեխնիկայով (օրինակ՝ գոմերի մաքրում, կթում, կաթի պահեստավորում, տեղափոխում):

Ուշ գարնանային և շատ անգամ վաղ ամառային ցրտահարությունները, կարկուտը, հաճախ չորային տարիները գյուղատնտեսություն վարելու համար Հայաստանը դարձնում են ռիսկային գոտի:

ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հողի որակի և կառավարման բարելավում: Իրավիճակը բարելավելու լավագույն տարբերակ է հանդիսանում պարարտանյութերի ներկրման դժվարություններն օգտագործել ի նպաստ օրգանական և կենսաօրգանական ուղղվածությամբ գյուղատնտեսությունը զարգացնելու համար, երբ անօրգանական բնույթի սննդատարրերը փոխարինվում են տարբեր եղանակներով վերամշակված գոմաղբում և այլ թափոններում (կենսահումուս, մեթենային խմորման կոնվերտ, կոմպոստ) առկա բաղադրիչներով: Տվյալ դեպքում հողը ոչ միայն հարստանում է անհրաժեշտ սննդատարրերով, այլ նաև հումուսի առաջացման համար անհրաժեշտ բակտերիալ կազմով: Այդպիսի հողերում աճող բույսերը քիմիկատների միջամտության կարիք չունեն, իսկ աճեցրած բերքը որակվում է որպես էկոլոգիապես մաքուր և հեշտությամբ գտնում է իր տեղը շուկայում:



Վերջին 10 տարիների ընթացքում փորձեր են արվել հանրապետությունում տարածել կենսահումուսի օգտագործումը: Առաջին քայլերն են արվում գյուղատնտեսության թափոններն (գոմաղբ, բուսական մնացորդներ) օգտագործել կենսագազ և բարձրարժեք կենսաօրգանական պարարտանյութ ստանալու համար: Կենդանիների գլխաքանակը հնարավորություն կընձեռնի ոչ միայն ապահովել բոլոր գյուղատնտեսական հողերն արժեքավոր կենսապարարտանյութով, այլ նաև թույլ կտա արտահանել դրանից ստացված խտացված պատրաստուկները:

Հայաստանը հարուստ է նաև մեկ այլ բնական ռեսուրսով, որը համարվում է հողի որակը բարելավող հիանալի նախապայման: Խոսքը վերաբերում է երկրի հյուսիս-արևմուտքում հայտնաբերված ցեոլիտների մեծ պաշարին: Վերջինս բարելավում է հողի գազափոխանակությունը և փոքր չափաբաժնով ապահովում սննդանյութերի մուտքը բույսի մեջ, ինչը չի հանգեցնում սննդատարրերի կուտակմանը բույսում և դրանով նպաստում բույսի աճի և արտադրողականության բարձրացմանը:



Հստակ է այն փաստը, որ գյուղատնտեսությունը չի կարող զարգանալ մեկ հեկտարից պակաս հողակտորների վրա և 336.000 գյուղացիական տնտեսությունը մեր ունեցած բնական ռեսուրսների համար շատ մեծ թիվ է: Դրա փոքրացմանը կնպաստի ինչպես

կոոպերացիան, այնպես էլ հողի շուկայի ակտիվացումը: Կոոպերացիայի նկատմամբ բացասական նախատրամադրվածությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է մշակել պետական քաղաքականություն՝ գյուղացուն առաջարկելով իրավաբանական տեսակետից պարզ և հուսալի ձևեր: Հողի շուկայի ակտիվացման համար անհրաժեշտ է ստեղծել հուսալի գործող հիպոթեքային համակարգ և մշակել հատուկ պետական ծրագիր:



Ոռոգման բարելավում: Անհրաժեշտ է բարելավել ջրատարների վիճակը, հստակեցնել ջրի փոխադրման ձևերը, գյուղացին պետք է ապահովված լինի ջրով՝ համապատասխանաբար վճարելով ստացված ջրի համար. մի բան, որն այժմ տեղի չի ունենում:

Անհրաժեշտություն կա նաև բարելավել ջրման տեխնիկան՝ հետզհետե անցնելով կաթիլային ոռոգման համակարգի կիրառմանը: Բնականաբար, լինելով ոչ պակաս ծախսատար համակարգ, կաթիլային համակարգը բարձր բերքատվություն է ապահովում և խնայում է տարածաշրջանում մեծ պահանջարկ ունեցող ջրի պաշարները: Փորձագետների կարծիքով Հայաստանը կարող է զգալի քանակությամբ խմելու ջուր արտահանել, այդ իսկ պատճառով ներկայումս մեծացվում և ամրացվում են բարձր լեռնային և նախալեռնային գոտու ջրամբարները: Դրանց գումարային տարողության համապատասխան մեծացումով միայն կարելի է այսօրվա օգտագործվող 2.5 մլրդ մ³-ից մոտենալ երկրի ջրային ռեսուրսների պոտենցիալ արժեքին, որը 7.5 մլրդ մ³ է, և ոռոգել ավելի քան 200 հազ. հա:



Ամենակարևորն այն է, որ ոռոգման համակարգի բարելավումը չի կարող տեղի ունենալ առանց լայն քննարկումների, որոնց ակտիվորեն պետք է մասնակցեն ֆերմերները, նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, տեղական կառավարման մարմինները:



Վերամշակում: Ներդրողների համար վերամշակող համակարգը գնալով ավելի գրավիչ է դառնում. դրա հիմնական պատճառը Հայաստանում աճող մրգի և բանջարեղենի բարձր որակն, անասնաբուժական արտադրանքի բարձր համային և էկոլոգիական հատկանիշներն են: Այն հանգամանքը, որ տվյալ բնագավառում կատարված ներդրումների արդյունքում նորանոր ապրանքներ են դուրս գալիս արտաքին շուկա, վկայում է նոր ներդրողների առաջացման մասին: Դա իր հերթին կհանգեցնի նոր վերամշակվող ձեռնարկությունների գործարկմանը և ոչ լրիվ հզորությամբ աշխատողների լիարժեք բեռնվածությանը: Այս պարագայում ոչ միայն կլուծվեն ֆերմերների համար այդքան կարևոր բերքի իրացման խնդիրը, այլ նաև ադեկվատ գներով ընդունման և ժամանակին վճարումներ կատարելու խնդիրները, քանի որ բավարար թվով մասնակիցների պարագայում բնագավառը կգործի առողջ մրցակցության պայմաններում:

Հայաստանում արդեն մի քանի տարի է, ինչ գոյություն ունեն ֆերմերային կրեդիտ-ակումբներ, որոնք վերը նշված գաղափարը տարածելու դեպքում, ավելի կաշխուժացնեն այն մթնոլորտը, որում գործում են վերամշակող ձեռնարկությունները:

Այսպիսով, կարելի է նշել, որ հայկական գյուղատնտեսական մթերքը կարող է հաջողությամբ շարունակել իր մուտքն արտաքին շուկա, հատկապես ժամանակակից վերամշակման և փաթեթավորման սարքավորումների առկայության դեպքում:

**Կոռպերացիա, կենսաբազմազանության
պահպանում, անտառների համատեղ
օգտագործում:**

Որոշ խոչընդոտների վերացման համար կոռպերացիան հանդիսանում է միակ միջոցը, մյուսների համար՝ հիմնականը, իսկ մյուս դեպքում՝



նպաստավոր: Կարելի է նշել գյուղատնտեսության բոլոր այն բնագավառները, որոնք զգալիորեն կշահեն կոռպերացիայից: Միևնույն ժամանակ պարզ է այն հանգամանքը, որ առանց համապատասխան սոցիալական ակտիվության տվյալ միջոցը կմնա չօգտագործված: Ինչպես կենսաբազմազանության պահպանման, այնպես էլ ազգային ռեսուրսների կառավարման և այլ էկոլոգիական միջոցառումների համար լավագույն միջոց է հանդիսանում կոլեկտիվ գործողությունների ձևը:



Բազմազանության կորուստը կանխելու համար ուտելի բույսերը և դեղաբույսերը, որոնք շատ են հավաքվում բնական վայրերից, անհրաժեշտ է աճեցնել գյուղացիական տնտեսություններում: Օրինակ՝ ծնեբեկը, սիբեիան ու ավելուկը, իսկ դեղաբույսերից՝ մատուտակը, կատվալեզուն և առյուծագի հնգաբաժանն, արդեն աճեցվում են ֆերմերային տնտեսություններում:

Անտառային տարածքների գրեթե կրկնակի կրճատումը վերջին 15 տարիների ընթացքում պարտավորեցնում է իրավիճակը շտկելու հատուկ մոտեցումներ դրսևորել: Անտառը համարվում է հատուկ տարածք, որտեղ մարդը կարող է ծավալել հաշվենկատ գյուղատնտեսական գործունեություն: Գյուղատնտեսական կենդանիներին անտառային տարածքներում պահելը հնարավորություն է տալիս ոչ միայն մասամբ լուծել նրանց կերի և հողի պարարտացման հարցն, այլև նրանց միջոցով արահետային ցանց ստեղծելով կանխել հնարավոր հրդեհների տարածումը:

Շատ երկրներում հայտին է անտառների վարձակալման ձևը. Հայաստանում առաջարկվում է անտառների վարձակալումը կատարել համայնքի կողմից, որը կպարտավորվի անտառ խնամքը, կկատարի սանիտարական հատումներ և

ծառաբազմացման աշխատանքներ՝ մասնագիտացված ատյանների հետ կնքած պայմանագրի համաձայն: Վերահսկման և գրագետ անտառօգտագործման պատասխանատվությունը կրում է ողջ համայնքը, ինչը կբացառի առանձին անձանց կողմից կատարվող չարաշահումները:

**ՎՆԱՍՍԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԻՆՏԵԳՐԱԾ
ՊԱՅՔԱՐ (ՎՀԻՊ) ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,
ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄ**


Այս գաղափարը միանգամայն պարզ է և ընդունելի. այն ենթադրում է միջոցառումների այնպիսի համաստեղություն, երբ սերմը հասցվում է պարարտ, մոլախոտերից, հիվանդություններից և վնասատուներից նախապես ազատված հողին, և բույսն աճեցվում է այնպիսի ագրոտեխնիկական պայմաններում որ քիմիկատներով միջամտությունը հասցվի նվազագույնի: Հայաստանում առկա են տվյալ գաղափարի իրագործման բոլոր նախապայմանները, ինչպես նաև մասանգեղություններ: Սակայն միակ խնդիրը սերմերի աղքատ շուկայի և ֆերմերների կոնսերվատիվ առկայությունն է, որոնք, չնայած նախազգուշացումներին, օգտագործում են հնացած և ժամկետանց, բայց ծանոթ ախտահանիչներ, որոնք արդյունավետ չլինելուց բացի, չեն համապատասխանում էկոլոգիական անվտանգության պայմաններին:



Ավանդական գյուղատնտեսությունից բացի՝ շատ երկրներում զարգանում է այլընտրանքային գյուղատնտեսություն, որն ունի տարբեր ուղղություններ և անվանումներ. օրգանական, օրգանակենսաբանական, բիոդինամիկ և այլն: Բիոդինամիկը մյուսներից տարբերվում է ավելի վաղ հայտնի լինելով և ավելի խիստ մոտեցումներով: Մյուսները բավական նման են իրար և հիմնված են ընդհանուր խնդրի վրա. նվազագույնի հասցնել արտաքին անթրոպոգեն

ագդեցությունը ագրոէկոհամակարգի վրա և առավել բարենպաստ պայմաններ ստեղծել նրա սեփական պոտենցիալը լիարժեք օգտագործելու համար:

Ագրոտուրիզմն այսօր Հայաստանում դեռևս գոյություն չունի, բայց կան վերջինիս երեք նախադրյալները.



Վերլուծելով իրավիճակը և հաշվի առնելով որոշ առանձնահատկություններ՝ առաջարկվում է Հայաստանի ագրոտուրիզմի մոդել՝ արտաքին և ներքին տարբերակներով:

✚ **Արտաքին տարբերակ:** Զբոսաշրջիկները հիմնականում գալիս են այլ երկրներից, որոնց մեծ մասը գյուղատնտեսության մասնագետներ են, նրանց հետաքրքրում են Հայաստանում գյուղատնտեսության վարման առանձնահատկությունները:

✚ **Ներքին տարբերակ:** Այս տարբերակում ներգրավվում են ոչ այնքան հարմարավետ կացարան և լրացուցիչ աշխատուժի կարիք ունեցող գյուղացիներ, այլ քաղաքացիներ, որոնք, հնարավորություն չունենալով այլ երկրներում կազմակերպել իրենց ընտանիքների հանգիստը, իրականացնում են այն բնության գրկում՝ օգտվելով թարմ գյուղատնտեսական մթերքից: Վճարումը կարող է լինել դրամով կամ պայմանավորվածության համաձայն՝ որևէ նախընտրելի

գյուղատնտեսական աշխատանք կատարելով: Երեխաներն այս պարագայում ստանում են պատշաճ աշխատանքային դաստիարակություն և առնչվում գյուղատնտեսության և բնության հետ:

ՎԵՐԱԿԱՆՔՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չունենալով օրգանական վառելանյութի սեփական աղբյուրներ՝ Հայաստանը կախման մեջ է ներկրվող էներգակիրներից: Արտադրվող էներգիայի միայն 20%-ն է ստացվում սեփական էներգառեսուրսներից՝ հիդրոէլեկտրակայաններում, մնացածը՝



ներկրվող էներգակիրներից, 45%-ը՝ ջերմակայաններում, իսկ 35%-ը՝ ատոմակայանում: Այնուամենայնիվ, Հայաստանն ունի վերականգնվող էներգիայի բավականին մեծ ռեսուրսներ: Դրանք հիդրոռեսուրսներն են, որոնց պոտենցիալը կազմում է 3.2 մլրդ կիլովատտ/ժամ,

որից այսօր յուրացվում է 1.5 մլրդ: Կան հողմաէներգետիկայի զգալի ռեսուրսներ, որոնց տեսական պոտենցիալը գնահատվում է ավելի քան 10 գիգավատտ/ժամ, իսկ դրա տասներորդ մասը համարվում է տեխնիկապես մատչելի:

Հայաստանում կենսազանգվածի օգտագործումը կատարում է առաջին քայլերը: Կան մի քանի անձնական օգտագործման փոքր կայաններ, որոնք բանակցություններ են վարում արտաքին ներդրողների հետ օրական 8.000մ³ մեթան արտադրող կայանի կառուցման վերաբերյալ: Համապատասխան միջոցների առկայության դեպքում մոտակա 10-15 տարիներին հնարավոր է օրական մեթանի արտադրությունը հասցնել 100.000մ³-ի: Հանրապետությունում գոյություն ունեցող անասնազվաքանակը գյուղատնտեսական այլ թափոնների հետ միասին կենցաղային աղբի և կոյուղու մասնակի վերամշակումը հնարավորություն կտան գրեթե լրիվ բարելավել ջերմային էներգիայի պահանջը:

Հայաստանի համար վերականգնվող էներգետիկայի զարգացումը ռազմավարական և կարևոր բնապահպանական խնդիր է համարվում:

ՀԵՏԱԳԱ ԱՂԱԿԱԼՄԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ ԵՎ ԱՂՈՏՆԵՐԻ ՕԳՏԸԱԳՈՐԾՈՒՄ

Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանի հողերին նույնպես սպառնում է աղակալում, և այն չկանխելու դեպքում սպառնում է աղակալման վտանգ: Հայաստանն ունի 5.000 հա առաջանային աղակալման հողեր, ինչը պայմանավորված է հողերի կազմով ու կառուցածքով, և երկրորդային աղակալման 25.000 հա հողեր, որոնք առաջացել են սխալ շահագործման կամ ոչ պատշաճ ագրոտեխնիկայի կիրառման հետևանքով: Խնդիրը ոչ միայն այն է, որ երկիրն առանց այն էլ



սակավահող է, այլ այդ հողերը գտնվում են գյուղատնտեսության վարման համար բարենպաստ գոտում՝ Արարատյան հարթավայրում, որտեղ կա նժողգման ջուր, և՛ ինսուլացիա (մեկ սեզոնի ընթացքում մի քանի անգամ բերք ստանալու հնարավորություն)՝ զբաղեցնելով գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերի ընդամենը 13%-ը՝ հարթավայրը տալիս է համախառն գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 40%-ը:

Միջոցառումները, որոնք կարող են կանխել հետագա աղակալումը և աղակալած հողերը դարձնել շահագործելի, հետևյալն են՝

- Մակերեսային ջրերի խորացում դրենաժային համակարգի միջոցով
- Տրանսպիրացիայի նվազեցում ջրախնա տեխնոլոգիաների կիրառման և դաշտապաշտպան անտառաշերտերի կառուցման միջոցով

- Հալոֆիտ և աղադիմացկուն բուսատեսակներ մշակելու և ճիշտ ցանքաշրջանառություն կատարելու միջոցով



ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՑԱՆԿ

- Հանրապետությանն անհրաժեշտ է գյուղական զարգացման, ինչպես նաև գյուղատնտեսական համակարգի ավելի կայուն մոդել, որն ավելի լավ կապեր է հաստատում շուկաների հետ և ընտանիքներին ու ֆերմերներին ավելի



բարեկեցիկ կենսակերպ ու եկամուտ է առաջարկում: Այսպիսով՝ առավել կայուն գերակա ոլորտները հետևյալն են. *ավելացնել գյուղատնտեսական արտադրանքը և զարգացնել*

շուկայագիտական համակարգերը, բարելավել հողօգտագործումը, մեծացնել հողագործության և արտադրական համակարգերի արդյունավետությունը՝

գյուղատնտեսական հաջող գործելակերպի համաձայն, բարձրացնել
ապրանքների մրցունակությունը:

**Առանցք 1: Բարելավել գյուղատնտեսության ոլորտի արտադրողականությունը,
շուկայի արդյունավետությունը, ինչպես նաև պարենային անվտանգության և որակի
չափորոշիչները**

Պարենային անվտանգության ապահովում, արտադրանքի
որակի, սանիտարիայի և բուսասանիտարիայի միջոցների
բարելավում, դրանց համապատասխանեցում
եվրոպական չափորոշիչների համաձայն


Գյուղատնտեսական արտադրանքի ռեսուրսների
(հատկապես հողային ռեսուրսների) արդյունավետ
օգտագործում համագործակցության տարբեր տեսակների,
առաջնային արտադրող և վերամշակող կողմերի
միավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով

Կայուն գյուղատնտեսության և գյուղական զարգացում
գյուղատնտեսական հաջող գործելակերպի և
համապատասխանության մեխանիզմների միջոցով

Արտադրության և վերամշակման տեխնիկայի,
սարքավորումների և տեխնոլոգիաների
արդիականացում

Տեղական և միջազգային մակարդակով շուկայի
արդյունավետության բարելավում,
համագործակցության բարելավում արժեքային
շղթաների ուղղությամբ

Առանցք 2: Գյուղական տնտեսության զարգացում (բազմազանեցում, ենթակառուցվածքներ)



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներդրումների խթանման գործակալության կարողությունների հզորացում:
Հզորացնելով ներդրումների խթանման գործակալության կարողությունները՝



Հայաստանի զարգացման հիմնադրամը պետք է ձգտի ավելի լիարժեքորեն բավարարել ոլորտային ներդրողների կարիքները: ՀԶՀ-ն ունի ներդրումներով զբաղվող երկու բաժին, որոնցից մեկն աշխատում է ներդրումային ծրագրերի մշակման, իսկ մյուսը՝

դրանց խթանման ուղղությամբ: Անհրաժեշտ է ունենալ մեխանիզմ, որով երկու բաժիններն էլ կունենան բավարար կարողություններ՝ ներդրողներին

գյուղատնտեսությանն առնչվող ծառայություններով ապահովելու համար: Այն պետք է ստեղծի գյուղնախարարության հետ կանոնավոր գործակցության մեխանիզմ: Ներկայումս այդպիսի մեխանիզմը բացակայում է կամ շատ թույլ է:

Թիրախային ներդրողների սահմանումը: Կոնկրետ երկրների և հեռանկարային ներդրողների թիրախավորումը կարող է օգտակար լինել ներդրումային քաղաքականության նախապատրաստման և իրականացման ընթացքում: Ուստի առաջարկվում է նախապատրաստել պոտենցիալ երկրների և պոտենցիալ ներդրողների ցանկ, որոնք կարող են հետաքրքրություն ցուցաբերել գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ անելու հարցում:



Գյուղատնտեսության ոլորտում պոտենցիալ ներդրողներ կարելի է համարել Միջուկի տարբեր համայնքները ներկայացնող էթնիկ հայերին կամ այն պետությունները, որոնց բնակչությունն աճում է, իսկ գյուղատնտեսական ռեսուրսները սահմանափակ են: Այդ երկրները և գործարարները կարող են շահագործված լինել մատակարարումների հարցում եղած խզումը լրացնելու մեջ: Հայաստանը գտնվում է գյուղատնտեսության զարգացման համար սահմանափակ պոտենցիալ և ռեսուրսներ ունեցող, բայց նավթով և գազով հարուստ արաբական մի

շարք երկրներից ոչ հեռու: Այդ պետությունները կարող են հանդիսանալ գյուղատնտեսության և պարենամթերքի արտադրության ոլորտներում ներդրումների լավ աղբյուր: Օրինակ՝ գառների բուծումը, ոլորտ, որի հանդեպ մեծ է Իրանի և Պարսից Ծոցի այլ երկրների հետաքրքրությունը: Եթե կառավարությունը մշակի արոտավայրերի մշակման պատշաճ ծրագիր և արոտավայրերի վարձակալման պատշաճ սխեմա, ապա կարող է հեշտությամբ գրավել ներդրողներին:

Ներդրումային ծրագրերի մշակում: Անհրաժեշտ է մշակել ներդրումային պորտֆել հետևյալ նպատակներով.

ա) ներդրումների հոսք գերակա ոլորտներում

բ) ներդրողներին շահութաբեր ներդրումների հնարավորությունների տրամադրում

գ) պետական և մասնավոր հատվածների պոտենցիալ գործընկերության զարգացում

դ) կառավարության կողմից աջակցության կոնկրետ գործիքների և մեխանիզմների սահմանում



Ներդրողների մեծ մասին հետաքրքրում են արագ և բարձր շահութաբերություն ապահովող, ինչպես նաև կառավարության աջակցությունը վայելող նախագծեր, ընդ որում կառավարության աջակցությունը կարող է

ունենալ բազմաթիվ ձևեր, սկսած որոշակի երաշխիքներից ընդհուպ մինչև համաֆինանսավորում: Ուստի նախագծերը պետք է լինեն ավելի շահութաբեր, քան պարզապես ֆինանսական պորտֆելի զուտ հատույցը: Անհրաժեշտ է մշակել նաև ռիսկերի նվազեցման ռազմավարություն:

Պարբերաբար թարմացվող հողային բանկի ստեղծում և հողի շուկայի խթանում:

Հողի շուկան և հողի առկայությունը կարևորագույն հարցերից են, որոնց բախվում են ներդրողները, մասնավորապես՝ նրանք, ում անհարաժեշտ են ավելի



ընդարձակ հողակտորներ այգիներ հիմնելու, կերի արտադրություն կազմակերպելու և այլ նպատակներով: Բանն այն է, որ համապատասխան հողակտոր գնելու համար ներդրողը շատ դեպքերում հարկադրված է այցելել գյուղեր և մարզեր: Ուստի կառավարության առաջին խնդիրը պետք է լինի տեղանքի տեղեկատվական համակարգի ստեղծումը, որը հասանելի լինի ներդրողների համար: Տեղանքի տեղեկատվական համակարգը պետք է բովանդակի պատշաճ տեղեկատվություն տվյալ տեղանքի վիճակի և հողօգտագործման պատմության վերաբերյալ: Կարելի է ավելացնել նաև տեղանքի քարտեզագրումը, ինչպես նաև հողի լավագույն օգտագործման վերաբերյալ առաջարկությունները: Տվյալների այս շտեմարանը կարող է շատ օգտակար լինել նաև այլ տեսակի ներդրողների համար, օրինակ այլընտրանքային էներգիայի ոլորտում:

Հողօգտագործումը խթանելու համար անհրաժեշտ է ընդունել պրոգրեսիվ հարկման գործելակերպ: Բացի այդ, պետք է մշակել հողի շուկայի մեխանիզմը, ընդ որում կառավարությունը կարող է դիտարկել գյուղական համայնքներում բրոքերային ծառայության ստեղծման հարցը: Հիմնականում ներդրողներին մտահոգում են հողի շուկայի արդյունավետությունը, ընդարձակ հողակտորներ և հողի սեփականատերերին գտնելու դժվարությունը:

Հողի շուկայի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար կառավարությունը պետք է որոշակիորեն խթանի համապատասխան ընթացակարգեր, կրճատի կամ վերացնի հողի ձեռք բերման կամ վարձակալության հետ կապված վճարումները և երախավորի սեփականության իրավունքները:

Մարդկային կապիտալի զարգացում: Մարդկային կապիտալը խիստ կարևոր է տնտեսության բոլոր ճյուղերի, հատկապես՝ գյուղատնտեսության համար, քանի որ գյուղատնտեսությանն առնչվող մասնագիտություններն այնքան էլ մեծ



հեղինակություն չեն վայելում հասարակության մեջ: Սակայն ավանդական գյուղատնտեսությունից դեպի տեխնոլոգիամետ և գիտելիքահենք գյուղատնտեսության ոլորտ փոխակերպման գործում կարևոր է

գիտելիքի առկայությունը: Կրթության նկատմամբ նվազ հետաքրքրությունը և կրթության ցածր որակը հանգեցնում են այն բանին, որ բացակայում են, կամ շատ քիչ են լավ ազդեցությունները, անասնաբույժները, պարենային անվտանգության մասնագետները և գյուղատնտեսական շատ այլ մասնագիտությունների տեր մարդիկ: Ընդ որում խնդիրներն առկա են մի շարք տարբեր մակարդակներում՝ միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, գյուղատնտեսական գիտասփյուռ-խորհրդատվական համակարգում: Որակյալ աշխատուժի առկայությունը ոչ միայն կզարգացնի տնտեսությունը, կբարելավի մարդկանց կենսամակարդակը և սոցիալական պայմանները, այլ նաև կխթանի նորարարությունը:

Գիտասփյուռ համակարգի մասանգետները պետք է ունենան ներդրումների գերակա ուղղությունների մասին լիարժեք գիտելիքներ և պատկերացում, որպեսզի կարողանան հստակ կերպով դրանք հասցնել պոտենցիալ ներդրողներին: Այն նաև պետք է հստակ դերակատարություն ունենա տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանցման գործում:

Բնածին աղետների ռիսկերի կառավարում: Քանի որ գյուղատնտեսության ոլորտը ամենառիսկային ոլորտն է համարվում, անհրաժեշտ է մտածել պետական մակարդակում այդ ռիսկերը նվազագույնի հասցնելու ուղիների մասին:

Հայաստանում հիմնական ռիսկեր են հանդիսանում ցրտահարությունը, կարկտահարությունը, երաշտը, ուժեղ քամիները և ջրհեղեղը: Յուրաքանչյուր ռիսկ ունի իր յուրօրինակ լուծումը՝ մեծ ներդրումների միջոցով: Կա նաև



գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրման հնարավորություն: Ընդհանրապես, լավագույն գործելակերպը կլինի այն բանի համար ապահովումը, որ ապահովագրության համար հաշվի առնվեն բոլոր այն ռիսկերը, որոնց ի հայտ գալու հավանականությունը 5 տարին մեկ է կամ ավելի ուշ: Եթե ռիսկերի ի հայտ գալու հավանականության ժամկետը 5 տարուց պակաս է, ապա ավելի լավ է ձեռնարկել պաշտպանության ֆիզիկական միջոցներ, ինչպիսին են օրինակ՝ հակակարկտային կայանների տեղադրումը կամ երաշտի ռիսկի պարագայում ջրային ռեսուրսների կուտակման և կառավարման ավելի լավ գործելակերպի որդեգրում:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):